Մալխոմեան երկար վիճաբանութենէ ետքը մուրհակը փոխելու յանձնառու եղած էր: Վառօի տեսքը կակղեցուցած էր զինքը, սրտին մէջ կրակ մը վառած և այդ վայրկեանէն մտքին մէջ մեղսապարտ գաղափար մը արթնցած էր:

— Խաչօ անպատճառ պիտի մեկնի, կ'ըսէր ինքնիրեն, վառօ մինակ պիտի մնայ, անշուշտ կը համառ զեմ զինքը:

96 սակիի մէկ տարւան տոկոսը հաշուելով 153¹/₂ սակինոց մուրհակ մը ստորագրել աւաւ չորս վիաներու Էքրկայութեան:

— 153¹/₂ սակի... կը շարունակէր վաշխառուն մտքէն, տարիներ պէտք են վճարելու համար: Մինչև ան ատեն գործս գործ է:

Եւ, յուսալից, մուրհակը գրպոնը դնելով մեկնեցաւ:

Երբ հայր ու տղայ աքանձին մնացին, Ղազար աղա ըսաւ.

— Զաւա՛կս, պանդխտելու կարողը քեզի եկաւ. ես ալ մէկ տարւան կարգւած էի երբ մայրդ թուրուցի. պանդխտութիւնը մեզի երկնքէն տրւած է, ի՞նչ ընենք, եթէ անկար չըլլայի, ես կ'երթայի:

— Քանի որ ես կեցած եմ, դուն ինչո՞ւ երթաւ յեր, ես պիտի երթամ:

— Ապրիս, զաւակս: Ստամբուլ զարմանալի տեղ մըն է, դուն քու անձիդ տէրն ըլլալու ես, օղի և ծխախոտ մի գործածեր, կնիկներէ հեռու կեցիր, խնայողութեամբ աւելցուցած ստակդ պարտքիդ պաւկեցուր, կիրակի օրերը եկեղեցի գնա, առտու և իրիկուն ազօթէ որ Աստուած յաջողութիւն տայ: Գալ շարթու ճամբայ ելլող կայ: Հաւաւ գիւղէն ճամբորդներ կան, անոնց ընկերացիր, Տէրը հետդ ըլլայ:

Խաչօ հօրը ձեռքը համբուրեց, բայց արցունքները չկրցաւ զօգել:

Մարթա խաթուն նոյն միջոցին ներս մտաւ.

հարցն ալ անկառն լալ գրածին ճիտը խնայուի, Գաղար
 աբրահա նախնայ՝ գիրկընդ խոսուեալ թեան և արտասոյ՝
 քին չը գիտանալով լաին լաին սկսաւ արտասոյնը։
 Եւ իսկ վրաս՝ որ ներսըն երած խոսակցութիւնը,
 լայն ու հոծը դուան հոտէն մտիկ կ'ընէր, գլուխը
 քարերուն վարսնելու վրձակին էր հասած և լրատիւ
 դարանս կտիրութեանց արուն հարկմատ հարսերը մե-
 ծնկուն քով ոչ կրնան խօսիլ և ոչ ալ կրնան մտնակցել
 անոնց լացին ու խնդումին, չէր համարձակէր ներս
 մտնելէ, որ քիչ զարագը զիմէան լի լի արտասոյնը։

Եւ զարագ զիմէան լի լի արտասոյնը։

Մեկունքը 22-ին խոշմախ գիւղի սղերսերնրու
 բնիւնման վայրը անտղին բաղնաթիւն մը հաւար
 բաժ էր, ու միջոցով վրէն ցնով կտառ ընտր
 էր լիք, նեռէ ու թառն տարեկան ձերքէ սկսեալ
 մինչև ամենամտքը երանխաները ներկայ էին, քահա-
 նայ մըն ալ կը գտնէր։
 Բնակիչները ստեղծ անոք մը լացն ու կոծը լսելով
 մահազոյժ տեսարանի մը հանդիսատես եղած պիտի
 կարծէր։ Պալլի Թարսերից պանդխտներու բնիւն-
 ման մէջ ամառը լի առանն էր ախա զեամ ի արդամ
 ի յի վնգ հանրապէս մէք ճի հրաժեշտ յղջնը ցաւ
 ւտաւայ ժամը և կամ թին միջոցները տեղի կ'ունե-
 նար, բայց ամենք ալ սովորութենէն և հեռանալու
 ժամը մէկին անդէն հաւարած էին։
 Պանդխտայր ըստ սովորութեան կ'այցելէ ի
 աղգականներու և մտակայ բարեկամներու առնէր
 վերջին մտք բարձր տալու, արնատնէլով կը բաժ

նի սիրելիներէն և կամայ կամայ կը մեկնի գիւղէն,
 հեաը կ'երթան իր մայրը, հայրը, եղբայրները, բա-
 բեկամները և եթէ ամէն մնացեալ է իր ընտանիքն
 ու զաւակները։ Ամէնք կ'երթան հաւարել բաժան-
 ման կենդանութեամբ, ամենուն գէմը պտտած, ամե-
 նուն աչքերը արտասալեցաւ զի իսկոյն զցնալու
 ժամը արտասոյնը հաւարէն յայն անոն կը
 կանգնի քահանան և ներկայը յանկայ՝ բընաւաթոր
 սքով Տեր աղայեան կ'ունկնդրին։

Մէկ երկու ժամ կը մնայ այստեղ մինչև որ
 ըստ արտասոյնը հաւարէն յայն անոն կը
 կանգնի քահանան և ներկայը յանկայ՝ բընաւաթոր
 սքով Տեր աղայեան կ'ունկնդրին։
 Մինչև այս վայրկեան լսիկ դամբիկ կ'արտասոյ-
 լին, այլևեթ ի մայր թմբակը վերջնապէս կ'անա-
 աղաղակը կ'ընկնէ և կ'ընկնէ քահանայ զարմեղի
 արմըխտային հեղ մայրը զանակին վիզը վրայ թե-
 լով ցաւագին սղեր կը կարգայ։

Միջև հոգիս, այլ չնիտի անանակ քեզիս։
 մն վշտակի մայրը, հայրը, ընտանիքն ու զաւակ-
 ները զիքը շրջապատելով կարտակէչ համբոյրներ
 կը տեղան, անոքը դժուարաւ կը դնան սրդիէն, հո-
 յեղանները ճամբարներուն գոյքերն և գեղիկանքն
 պաշտը ջարհներուն բեռցած ծանր ծանր կը յառա-
 ջանան, այս միջոցիւ շատ անգամ կը ստորին մայրն
 սեւամուսինը և ջին կրնար աչքով հեռիկ իրենց որդե-
 տի հատորներուն։

Իսկ խոշուն ալ այս սրանդուտ սղերսերնրու մէջ էր,
 մայրը խիտ գծարութեամբ բամեցին, իսկ հեղ
 վատն, որ իրն նոր հարս գաւառական ստեղծ
 թիւնը չէր ներքեր որ իր սիրելիին վիզը նեակելով
 ջնքնողին համբոյրները դրոշմեր, լսիկ սղակիր և սքով
 տաճակի կը գիտէր ու կ'արտասոյն էր։

Խաչօի աշերէն կաթիլ մը արցունք չէր գար, արցունքի աղբւրակները կարծես ցամքեր էին. որչափ չէր արտասուեր, ներքնապէս այնչափ կը նեղւէր, ձեռք մը կարծես կտորոզը կը ճնշէր:

Խաչօ երբ վառօի վրայ իր վերջին կարօտակէզ նայածքը ձգելով կը յառաջանար, յանկարծ վառօ անոր վիզը փաթթւեցաւ . . . :

Ամեն բերնէ զարմացման ճիշեր արձակեցան: — Ի՞նչ կ'ընես, հարս... պոռաց Ղազար աղա:

Սակայն ներկաներն այս այս անսովոր վարմունքին դէմ փոխանակ դժգոհալու աւելի արգահատեցան խեղճ հարսի վրայ: Անոր չափազանց սիրոյն առջև ամօթխածութիւնը չէր վիրաւորէր:

Մօրմէն աւելի մեծ դժւարութեամբ զատեցին վառօն որ արդէն մարած էր:

Ողջերթի եկողները ակնապիշ՝ ուղեւորներուն հետեւեցան մինչև որ Հաւաւի պարտէզներուն ետին անհետացան անոնք:

Իսկ Խաչօի ծնողքը և կինը ուղեւորներուն հետեւեցան մինչև Հաւաւի բաժանման վերջնական կէտը:

Խօշմաթի պանդուխտները Հաւաւի պանդուխտներուն միանալով քնիլուսն մը պիտի կազմէին. այս պատճառաւ Խաչօ ընկերներով դնաց Հաւաւի ճամբորդներուն միանալ:

Բաւուցիք (գիւղացիները միասին առնելով) Պոլիս երթալու համար երեք սարբեր ճամբայ ունին:

Առաջինը Բիզիի ճանապարհն է, ուրկից մեր Խաչօի քէվրանը պիտի երթար. այս ճամբով ուղևոր մը 15-16 օրէն Պոլիս կը հասնի ջորեպաններով. այս ճամբով ուղևորին անցած քաղաքներն են Բիզի, Դերջան, Երզնկայ, Կիւմիւշխանէ և Տրապիզոն:

Երկրորդ ճամբան Բերրիէն (Չարանճաղ) և Տաւրոսի լեռներու (Տէրօիմ) շղթաներէն անցնելով կ'իջնայ Երզնկայ և անկից Տրապիզոն: Այս ճամբով ուղևոր մը 14 օրէն կրնայ հասնիլ Պոլիս:

Երրորդ ճամբան ամենէն երկարն է. ուղևորը խորրեքդէն ելլելով կը հանգիպի Մալաթիա, Ալաճա-խան, Սերաստիա, Եէնի-խան, Եղոսկիա, Սմաւսիտ, Քապղա և Սամսոն: Այս ճամբան խճուղի շինւած ըլլալով կառք կը բանի և ուղևորը 20-21 օրէն կրնայ Պոլիս հասնիլ:

Բաւուցիք Պոլսէն հայրենիք վերադառնալու համար այս ճամբան կ'ընտրեն, որովհետև աւելի ապահով է, դէպ ի Պոլիս գնացած ատենին ալ առջի երկու ճամբանները:

Խաչօի ջորեպանները ժամը 4 ու կէսին Հաւաւ գիւղը մտան. այս գիւղին պանդուխտ ուղևորներն ալ հաւաքւած էին իրենց բաժանման կենդրոնավայրը, Մանկընկոյ կոչւած աղբիւրը, գիւղէն քառորդ ժամ հեռու, որուն քաղցրահամ գետնաբողխ ջուրը կերթայ ոռոգել գիւղին առջև գտնւած արտերը և մարգագետինները. սքանչելի ժամադրավայր մը որ ողբերգական կենդանավայրի մը փոխւած է:

Հոն էին Հաւաւի ճամբորդներու մայրերը, հայրերը, եղբայրները, ամուսինները, զաւակներն ու բարեկամները:

Գիւղին երկու ձերուկ քահանաները ցուպ ի ձեռին կը հասնին:

Բաժանման տխրազգեցիկ և սրտաճմլիկ տեսարանը հոս ևս կը պարզւի. այս անգամ Խաչօն, այն չլացող Խաչօն, կը սկսի աղբիւրի նման արցունք թափել. ալ ոյժը թուլացած էր:

Իր հօրը, մօրը և վառօխ արցունքներն ալ իրենինին խառնեցան, մինչև որ Ոչ թ ափան, բաժանման անմենավերջին կէտը հասան: Սյուսեդ ևս կրկնեցան բաժանման սրտածմլիկ տեսարանները և վերջապէս սիրելիներ իրարմէ բաժնեկցան . . . :

Անդին, վառօխ արցունքներն ալ չը պակսեցան: Առտու իրիկուն եկեղեցիէն չէր բաժնէր, ջերմաջերմ ազօթքներով հայցելով սր շուտ դառնայ իր սիրականնր: Շարաթը անգամ մըն ալ մօտաւոր ուխտատեղիները կ'երթար, արցունքներով թրջելով ցարաքարերը: Անգամ մըն ալ քաղցրահտեաց Ս. Մնատաճաճնի վանքը գնաց մասազ ըրաւ:

Վեց ամիս անցած էր և դեռ յաջօէն զիր եկած չէր: Պանդուխտներու սովորութիւնն է այսպէս երկարատեն լուր չտալ իրենց մասին: Սմուտիննէր կան, որ 5-10 ամրի պանդխտութեան մէջ կը մնան առանց առդ մը գրելու իրենց սիրելիներուն: Նամակ մը գրելը, զգացումնին գրով մը յայտնելը ամօթ կը սեպեն:

Վառօ այս երկար լուր թեան չը գիմանալով սուխուրեցաւ առաջին նամակը ինքը գրել տուլ, յայտնել իր սրտի կակիճն ու անդարմանելի կարօտը, ազաչել ու պաղատել որ շուտ դառնայ: Վառօ նամակ գրելու համար ուրիշ մեծ պատճառ մըն ալ ունէր, կ'ուզէր յղութեան աւետիսը հաղորդել:

Սյդ գիրը գրել տալու համար, խեղճը ինչ հոգու չարչարանքներ չը քաշեց իբր նոր հարսնիք մէկու մը հետ չի կրնար խօսիլ, հեռաւարար, խեղճ կիներ չէր կրնար բացատրել նամակին իմաստը:

Մտածեց հաւաւ երթալ վարժապետին քրով մօտ

սր բարեկամուհին էր, զինքը թարգման զբռնելով գրել տալ ցանկացած նամակը, և այնպէս ալ ըրաւ: Եկեղեցիէն օր մը իր եղբօր հետ վանք երթալ պատրաստով հաւաւ գնաց: Երբ ինչ միջոց զգաց զվարժապետին քոյրը թագուկ խաթուն, վառօն եղբօրը ներկայացնելով խնդիրը բացառիկ արարողով վարժապետը սպիտակ թուղթը անջելը պարզեց և գրիչ ի ձեռին սպասեց վառօի ըսելէքներուն:

Ի դուր կը սպասէր, վառօ անխօս կը մնար, միայն մերթ ընդ մերթ կը գրդէր իր բարեկամուհին սր խօսի: Երբ լսեց ինչ որ գրեց, ըսաւ վարժապետը համբերութիւնը հատնելով:

— Խօսէ՛, ըսաւ թագուկ խնդալով: Վառօ թագուկի ախանջին մտեցնելով բերանը ըսաւ ինչ որ հասկցնել կ'ուզէր վարժապետին, ամօթ խածութենէն հազար ու մէկ գոյն թոխելով, չէր համարձակէր աչքերը վեր վերցնել:

Վերջապէս այս թարգմանին միջոցաւ ըստ կարելոյս յաջողեցաւ իր սրտին թագուն զգացումները, կարծօրը, սէրը, վախերը, արտասուքներն և ի վերջոյ յղութիւնը յայտնելու և խնդրելու որ շուտ ճամբայ ելլէ:

Վարժապետը վառօի միտքն ու հոգին հատկանշելով զգացմամբ լեցան նամակ մը գրեց, այնպէս որ խաջօի աչքերէն շատ արցունքներ պիտի կորզէր:



Խաջօի աշխատանքութիւնը, ախիւ բնատուրութիւնը և հօրը խաթրը զինքը հայրենակիցներուն

սիրելի ըրած էին, Պօլիս համեմուն, իրեն շուտով գործ գտան:

Բայց ինչ կրնար շահիլ պարզ գործաւոր մը, որ քար ու ցեխ կրելէ զառ արհեստ մը չունի:

Քանի պայմանաժամը կը մօտենար, այնքան կը կրկնապատկէր իր աշխատութիւնը և խնայողութիւնները, սակայն իզուր . . . : Տարին լրացաւ և դեռ ինքը ցամաք հաց ուտելով 153½ սակի պարտքէն հազիւ 3) սակի վճարած էր:

Այս վճարումը ըրած էր Մալխոմեանի գործակատարին որ միևնոյն Չուխուր-Չէշմէ խանը կը բնակէր: Մուրհակը ըստ սովորութեան վաշխառուներու Բալու մնացած ըլլալով, վճարումները ըստ օրինի ետին չէին նշանակէր:

Խաչօ կը զգար թէ այս անպիտան պարտքին պատճառաւ երկար տարիներ պիտի զրկուի իր հոգեկից վառօէն և նորածին մանուկէն, որուն ծնունդը վառօի երկրորդ նամակէն իմացած էր:

Անոնց կարօտով թէև կը հալէր ու կը մաշէր, սակայն այս անյայտ վիճակը զինքը աւելի կը դրդէր աշխուժիւ աշխատելու և մեծ վարպետներուն համակրանքը շահելու:

Վաշխառուն իր գործակատարին զրած էր խաչօն չը ներդել. Խաչօ չէր գիտեր ինչպէս իր շնորհակալութիւնը յայտնէր էֆէնտիին որ այս շնորհը կ'ընէր իրեն:

Թշուառ բարեօիրտ Խաչօ, բարեք կը յուսար այն անձէն որ իր կործանումը կը փութացնէր, անպաշտպան մնացած կինը թակարդի բերել կուզէր:

Վաշխառուն իր նպատակները գործադրելու հա-

մար սկսած էր յաճախ այլ և այլ պատրուակով Ղազար աղայի այցելութիւններ տալ:

Ըստ զիւղերու նահապետական սովորութեան, այցելու հիւրին սուրբերը լաւը տան հարօին կը պատկանի:

Վառօ վաշխառունն սուրբերը լացած միջոցին իր մատներուն սեղմելը զգաց: Խեղճ կինը ինչ ընէ. կէսուրը նստած է. կը յուզուի, կը կարմրի, բայց վերջապէս համբերութեամբ կ'աւարտէ իր տաժանելի պաշտօնը:

Գաւառներու մէջ, հիւրին սպասարկուն պզտի հարսն է, անիկա է որ հիւրին երեսին ջուրը կը լեցնէ և անձեռնօցը կը բանէ, անիկա է որ անկողինները կը վերցնէ և սեն'աղը կը մօքրէ:

Հեռեաքար վառօ ստի'աղ էր առսուօտուն դարձեալ տեսնել այդ մարդուն դէմքը, և կամքին ու զգացումին հակառակ ստիպեալ գնաց կատարել այդ պարտքը:

Մրտագորով մը մասաւ Մալխոմեանի սենեակը:

Եւ այն միջոցին ուր վառօ անկողինը կը վերցընէր, Մալխոմեան պատեհ առիթ համարեց գալ մօտը և ականջն ի վալը զինքը սիրելը յայտնել, և մինչև իսկ այնպիսի համարձակութիւն մը տեսնել որ կինը անոր ձեռքէն ազատելու համար ստիպեցաւ հուժկու բազուկներովը մէկզի հրել անիկա և թողուլ ելլել սենեակէն:

Տեսն ոչ որ իմացաւ այս դէպքը:

Մալխոմեան, առանց յուսահատելու, բրօշեց այն օրը մեկնիլ ու քաղաք երթալ, յուսալով նպատակին հասնիլ աւելի վարպետ միջոցներով:

Բայց այս գեղքը լսելով կենը յուզելը ցնցելը էր հիւանդ ձգելու ստորհման: Դժբախտ վայր զայս աս Ուրիշ օր մըն լալը դարձեալ տրոպիսի այցելու թեան մը ստան, վաշխառուն խոտաայտ 153 1/2 ոսկիի մուրհակը ստառել և խաչօն Պսլսէն բերել տալ էր բա այս մէջըն ալ ապարդիւն մնաց, այն ատեն սկսաւ հարսին ետեկն լրտեսներ սրտոյնել:

Ստան մը ետքը առեթը ներկայացաւ:

Վառօ անբնակայիշ լի խնդութեամբ լուր տաւ էր թէ էր սիրական խաչօն պիտի դայ, և ֆարցրաւ հայեաց Ս. Ստաւածածին վանքը ուխտ կատարելու կ'երթար էր հինգ տարեկան դաւակին հետ:

Երեքշաբթի օր մըն էր, վանահայրը որ վանք գամայի Բալուի առաջնորդէ էր քարոք գացած էր, վաճփն երկաւ մշակներն ալ հետը պահարու մէջ կ'աշխատէին, վանքը բոլորովին ամացի էր:

Լրտեսները վառօի այս ուխտագնացութիւնը Մալխոմեանին հաղորդած էին:

Մալխոմեան այս լուրին վրայ դարախանալով ձին սրտըստ քշեց ու հանաւ վանքը, ձին պարտեզին մէջ կապեց և սկսաւ վառօին ուր ըլլալը փնտռել: Վառօ գեռ վանք հասած չէր էր թափեկ տղուն ձեռքէն բռնած վանքին պարտեզներուն մէջի նեղ ճամբէն անցնելու մէջնային, դեմը տեսաւ յանկարծ վաշխառուն, որ իրեն մտնեցաւ և զինքը բռնեց:

Վառօ, երկիւղէն և յուզումէն կը գողար բոլոր մարմնովը թուլացած էր: Եւ տակայն էր մէջն պէտք ելած սլոլը գտաւ դիմադրելու: Մալխոմեան, իրեն դեմ սոյց տրած այս ընդդիմութեան կարծեա աւելի գրգռւած տառը հսկու զօրութեամբ լցւած կը թուէր:

Վառօ յուսահատ կանաղութեամբ դիմադրեց ու վերջապէս յաղթանակը իրեն մնաց. Մալխոմեան, ապիկարութեանը համարած, աղւաներուն մէջէն հայհոյալ թիւն մը մուտաւելի, ձին նստաւ ու հեռացաւ:

Այս գերագոյն կռիւն մէջ վառօի ուժը սպառած էր. մարմնելիքներով մատուր հասաւ և ուժախալ սեղանին առջևը ինկաւ:

Տղուն ձիւները այդ կողմը բերին հողագործները: Այս բարի մարդիկ էրը ներս մտան, ստիպուի և զարմացման աղաղակ մը արձակեցին, տեսնելով հոն կին մը որս զգեստները պատառ պատառ էին և սեղանին առջև դրեթէ մարած ինկած էր:

— Մալխոմեան... կը կրկնէին ամեն բերաններ:

Մէջերնէն, ծերունի մը ըսաւ.

— Շատ խօսելու պէտք չի կայ, այս կինը հիւանդ է, ստունը տանիլ պէտք է:

Վեց օր վերջը, խաչմտիկի վրէշն քաղաքին թաղապետական բժիշկը կանչեցին:

Հիւանդը վառօն էր. անխօս անզգայ պառկած էր, անզամները չէին շարժեր, բերանը չէր բացուեր, սրով վեց օր անտունդ և անաւալ մնացած էր, և տան բնակիչները յուսահատ բժիշկը կը գիտէին, անոր մէկ բառին կը սպասէին, ու խալութեան ճախեր և կամ որքեր արձակելու համար: Թէ է կը երկու օր ի զուր աշխատեցաւ, բոլոր ջանքերն ու ջիգերը ի դերի ելան, չը կրցաւ ուշտրեղիլ զե՛րը: Հիւանդութիւնն էր տառիկ յուզման սրտհառաւ ֆարսիքայի լերաց ժիշ:

Իր երկանք Պսլսէն ճամբայ ելած ըլլալը ինչուցային բժշկին, որ յայտը պարզապէս փրայ:

դրաւ: Թերևս անոր ճախին մագնիսական աղբեցուն թեամբը վայրկենապէս ուշաբերէր, կեանքի վերադառնար: Ուստի մէկ քանի հրահանգներ տալով մեկնեցաւ:



Այս վեց տարեան միջոցին խաչօ ալ ունեցաւ Պոլիս իր լաւ և գեշ օրերը:

Իր պանդխտութեան երկրորդ տարին անցնելով երրորդ տարին յաջորդեց, անձը ամենամանր զրկանքներու և խնայողութեան ենթարկելով 40 ոսկի ևս վճարած էր կը մնար 80 ոսկի պարտք մը առանց հաշուելու տոկոսը:

Այդ տարիներու մէջ արտերէն ալ մեծ արդիւնք մը չէր քաղւած, միայն մի քանի ոսկի մանր մոնր պատքեր գոցելու ծառայած էր:

Ուրեմն 80 ոսկի վճարելու համար կը պարտաւորէր 2-3 տարի ևս չը տեսնել իր կինն ու զաւակը, զրկւած պիտի մնար անոնց գգւանքէն:

Սիրոյ սիրտ մը միշտ զօրաւոր է: Խաչօ այսպէս զօրացած՝ դժարութիւններուն համբերութեամբ յողթեց. երկրորդական վարպետ մը եղած էր, իր շահերը կրկնապատկեցան, մեծ յոյս ունէր թէ մէկ տարիէն պիտի կրնար վճարել իր բոլոր պարտքը և յաջորդ տարին ալ իրեն համար աշխատելով՝ սիրոյ ընել:

Իր հաշին, իր յոյսերուն մէջ սխալւած չէր, գործերը յաջող կ'ընթանային, երկրորդական վարպետ մը տարին ութսուն ոսկի կրնար շահիլ, մանաւանդ

խաչօն նման ուղղածիտ և աշխատասէր մէկը որ երեւելի ճարտարապետներու որով մասնաւոր համակրանքի արժանացած էր: այլով իրաւաւ լիցաւ մեզ

Չորսոյ ուշակ դիպումը մը եկաւ խաչօին հաշիւները տալիս ու վրայ ընել: ի՞նչ մեծ դա մի և միջ ձեռնով

Տան մը շինութեան մասնակցած միջոցին եռաշարի տեղէ մը վար իյնալով սոկորները խորտակեցյան և անշունչ փոխադրեցաւ Ազգ. հիւանդանոցը:

Չորս ամիս անկողին պատկելէ վերջը նիհար և դալկահար մեկնեցաւ հիւանդանոցէն:

Վատուժութեան և թեխն նոր բաժւած ըլլալուն համար չէր կարող աշխատիլ:

Խանին օգը վատանողը և ինքն ալ անկար ըլլալուն վերստին հիւանդացան, հինգ հոգիի հազիւ բուժուց սենեակի մը մէջ 20 հոգի կը պառկէին, այդ սենեակներուն թանաւոր օդն է որ գաւառացի առողջները գունատ և վատանող կ'ընէ:

Բարեկամները ուղեցին դարձեալ Ազգ. հիւանդանոց փոխադրել զինքը, ընդդիմացաւ: Երթալով վիճակը կը ծանրանար, որով ընկերները ստիպեցան բռնի տանիլ զայն հիւանդանոց:

Էրկու ամիս վերջը խաչօ կատարելապէս ապամընսած հիւանդանոցը թողուց:

Այս ճախորդ հարւածները զինքը ֆիզիքապէս ու բարոյապէս ընկճած էին, ֆիզիքապէս՝ որովհետև կտորած բազուկը իր ծանրածանր աշխատութեան արդեւէ կ'ըլլար, բարոյապէս՝ որովհետև իր սիրելիներուն համար զգացած կարօտն և գործին անյաջողութիւնը, պարտքին անվճար մնալը իր հոգին կը ճնշէին:

Անգործութեան դատարարուած, իր ժամերուն մեծ մասը խաւեր կ'անցընէր:

Նոյն տարին, Հաւաւցի երկու: երկուստարդներ մտադրած էին արայասահման երթալ, իրենց ազգականներէն մին որ հոն կաշխատէր, գիրէնք հրաւիրած էր:

Խաչօ ալ անոնց հետ ճամբայ ելաւ: Հոն բազմը ժպտեցաւ իրեն վերջապէս, և քիչ ատենէն գրաւանը լեցուց: Ախ, երկիր պիտի դառնար:

Մինչև Բալու ճանապարհի ծախսը և տան վերաբերեալ գոյքերը զնեւը դրամնեա հայթայթելով, 120 ոսկի գրաւանը դրած ճամբայ ելաւ և հօրն ալ հեռագրաւ հաղորդեց այս ուրախառիթ լուրը:

Վառօ իր ամուսինին ճամբայ ելլելուն բերկրառիթ լուրն աննելով հետեւեալ երեքշաբթի օր իր ուխտը կատարելու համար Քաղցրահայրաց Ս. Ստաւածածին վանքը զնաց, ուր պատահեցաւ քստմնելի տեսարանը:

Խեղճ Խաչօ սիրուն երազներով կը ճամբորդէր, մինչ հէգ կլինը անշունչ գիակ մը գարձած անկողին կը մնար:

Խաչօ իր ծննդավայրին՝ Խօջմաթի երկու ժամ մնացած, ընդառաջ զրկեց զալստեան աւետիսը հաղորդող ջորեպան մը:

Խաչօի ծնողքը, այս խնդալից լուրն աննելուն պէս, մէկ քանի բարեկամներու հետ զայն գիմաւորել եկան:

Գիւղին մէկ ժամ մնացած, այս կարօտալից հոգիները իրարու պատահելով գիրկընդխառն՝ ուրախութեան արտասուքներ թափեցին:

Իր պաշտելի վառօին ու սիրասուն զաւակին բա-

ցակայութիւնը աչքին զարնեւալ, Խաչօ խոտկայոյզ սրտով մը հարցուց:

— Ո՞ւր է հարսը, ո՞ւր է դուակօ: —

Գիմաւորողները զօճնութափեցան: Ետեւ մը հնարել պէտք էր այս խոտկեալ ու կոտկածոտ մխոքը հանդարտեցնելու համար:

Մտկայն ոչ ոք բերանը բացաւ:

— Ո՞ւր են, ըսէ՛ք, պոռաց Խաչօ խելագործի նման:

Ղազար աղա սուտ մը հնարածի նման ուրախուած թեամբ պատասխանեց:

— Տունը պահելու համար գիւղը թողուցինք:

— Սուտ է, պոռաց Խաչօ ալ անելի յուզեւելով և սրտին խորէն վշտաբեկ հառաչ մը արձակելով: Սուտ է, տունը մշակներն ալ կրնային պահեր...:

Տեսնելով որ պատասխան մը չեն տար, հեծկըլտաւով ըսաւ.

— Ախ, մեռաւ...:

Չինքը սիրտիւն համար պարտաւորեցան ճըշմարտութիւնը խօսիլ:

— Չուզեցինք սիրտը կտորել, հիւանդ է, ըսաւ հայրը համոզիչ շեշտով մը:

— Հիւանդ է, կրկնեց Խաչօ քիչ մը հանդարտեւելով, շո՛ւտ երթանք, տեսնել կ'ուզեմ:

Խեղճը չէր գուշակեր թէ այնպիսի հիւանդ մըն էր որ մեռելէ մը տարբերութիւն չունէր:

Ճամբորդներն անհամբեր վառօի պատկած սնեւեակը մտան, ուր տարաբախտ հիւանդին քով սպաւորող պատու կլին մը և իր զաւակը կը գտնուէին:

Խաչօ սենեակէն ներս մտնելը և խենթի նման

Վառօի վիզը փաթկելիւր մէկ ըրաւ, աղեկաւոր ձայնով մը կրկնելով:

— Վախ, վառօս, դուրպան...

Վառօ անշարժ ու անզգայ կիսամեռ անկողնին վրայ տարածւած էր:

Ինչպէս որ բժիշկը գուշակած էր, խաչօի ձայնը մազնիսական ազդեցութիւն մը ունեցաւ Վառօի լսելիքներուն վրայ:

Մանկամարդ կինը խկոյն աչքերը բացաւ և նւազկատ ձայնով մը լնթովեց:

— Խաչօս...

Սուգը անմիջապէս ուրախութեան փոխուեցաւ, արցունքները դադրեցան:

Երկու կարօտեալներ ջգապինդ գերար գրկած էին. պզտիկ Թադիկը ասոնց վրայ նետւած մանկական յատուկ ուրախութեան ճիչեր բառնալով մէյ մը մայրը և մէյ մըն ալ հայրը կը համբուրէր:

Իսկ հոն ներկայ գտնուողներ այս սրայայոյզ տեսարանին խորապէս զգածւած, կ'ըսէին իրարու, որ պէս թէ հրաշք մը կատարւած էր:

— Խօսեցան, Խօսեցան...

Վառօ աչքերը բացած ապուշ ապուշ չորս կողմը կը նայէր. դեռ յիշողութիւնը կատարելապէս ամփոփւած չէր:

Գաւառներու մէջ ներքէի չէ որ որդին իր ծնողքին ներկայութեանը հարտին հեռ խօսի, և ոչ իսկ ջուր ուղելու համար անկէ: Այս սովորութեան համեմատ, խաչօն հիւանդէն զատեցին:

Այս բաժանումը թէև անազօրոյն, սակայն Վառօի նպաստաւոր էր. չափազանց յուզելիւր վնասակար ըլլալով, միջոց մը հանգիստ մնալու էր:

Շատ չը տեկց, Վառօ կատարելապէս վերակենդանացաւ. անցեալն ու ներկէն յիշելով գրայցիներու հետ կը խօսէր:

Խաչօ լսելով թէ քաղաքը բժիշկ մը կայ, հետևեալ օրը հրաւիրեց զինքը: Հէգ կինը չափազանց նիհարցած, իր դէմքին վրայ կը կրէր խոր վշտի մը տպաւորութիւնը:

Մէկ քանի օր դարձնուելով իր նախկին առողջութիւնը վերստացաւ:

Երկու տառապեալ հոգիները անցեալը մոռանալով սկսան խաղաղ և երջանկաւէտ կեանք մը վայելել:

Վառօի հիւանդութեան պատճառը խաչօն դողոտնի պահեցին. այդ տխրազդեցիկ անցքին վրայ իրեն ոչ ոք բան մը խօսեցուց:

Երկու ամիս վերջը խաչօ թէ իր շնորհակալութիւնը յայտնելու և թէ վճարած պարտքին մարհակը ետ պահանջելու համար Մալխոսեանին այցելեց:

Խաչօ և Մալխոսեան միեւնոյն շտորանին չորջր բողմեցան, ուր վեց տարի առաջ արդէն մէկտեղած էին:

Բարի եկարնները վերջանալէ յետոյ խաչօ սկսաւ իր խօսքը:

— Լիքնտիա, ձեր շնորհիւ արիշներու տուժեալ մօթով չը միացինք, շնորհակալութիւնս կը յայտնեմ ձեր ըրած բարիքին համար:

— Աստուորի մէջ շնորհակալութիւնը էվէլ բան է. անանկ է նէ ես ալ քեզի շնորհակալ ըլլալու եմ որ կունակեգ շահեցայ, պատասխանեց Մալխոսեան ամարդօրէն:

— Քառ լիցի, ձեր ըրածը բարեք մըն էր :
 — Շնորհակալութենէ առաջ հաշիւնիս տեսնենք, ըսաւ վաշխառուն խորոխտարար զոհին երեսը նայելով :
 — Ի՞նչ հաշիւ, պատասխանեց խաչօ ազգած :
 — Փոխ առած գրամնուդ հաշիւը :
 — Ամբողջովին ձեր գործակատարին վճարած չե՞մ, ըսաւ խաչօ քիչ մը յուզած :
 — Տոկոսը թէ բուն պարտքը վճարեցիր, ըսաւ վաշխառուն կռիւի պատրաստ մարդու մը դէմքով աշեշտով :
 Խաչօ ևս աւելի յուզելով ըսաւ :
 — Թէ՛ տոկոսը և թէ բուն պարտքը վճարած եմ :
 — Գործակատարիս ս'ըջափ գրամ յանձնեցիր :
 — 153½ սակի...
 — Լաւ, ճիշդ է, բայց քանի՞ տարւան մէջ :
 Խաչօ խորամանկ վաշխառունին միտքը հասկանալով պատասխանեց :
 — Երեք տարւան մէջ :
 — Աղէկ, դուն հաշիւ գիտցող մարդ ես, 153½ սակիին երեք տարւան տոկոսը հաշուէ՛, ի՞նչ կ'ընէ :
 — Ի՞նչ շահ, 153 սակիին 93½ սակին տոկոս չե՞մ մի :
 — Քեզի հաշուէ հասկցող ու բանգէտ մէկը կը կործէի, ըսաւ վաշխառուն չարածճի խնդումով մը :
 Խաչօ բարկացաւ :
 վաշխառուն շարունակեց :
 — 93½ սակին փոխ առած ստակիս երկու տարւան տոկոսն էր, երկու տարի վերջը իմ բուն առնելիքս 153½ սակի էր, ինչպէս որ մուրհակդ քովս է :
 ուրեմն 153½ սակիին երեք տարւան տոկոսն է որ կը

աբահանջեմ : այս պարզ հաշիւին ինչո՞ւ խեղճը չի հասնիր :
 Խաչօ մասամբ իրաւունք կուտար այս խօսքին, բայց անիրաւ կը գտնէր տոկոսին համար չափազանց տակաւ վճարել :
 Եթէ նեղը մնար, պիտի կրնար 30—40 սակի տոկոս մը վճարել և մուրհակը ազատել : ուստի դիմացինին միտքը աղէկ մը հասկնալու համար ըսաւ :
 — Այդչափ փոքր տակաւի մնացորդ մը արժէ որ մեղ բաշխէք :
 — Ի՞նչ, փոքր տոկոս մի, լաւ հաշուէ :
 — Հազիւ 30—40 սակի կ'ընէ :
 — Որչա՞փ, պտուայ վաշխառուն :
 — 30—40 սակի, կրկնեց խաչօ :
 վաշխառուն ճիւղաբար ծիծաղելով շարունակեց :
 — Խօսքը երկարել չեմ սիրեր, 270 սակի տոկոս մը կը պարտիս ինծի :
 — 270 սակի... կրկնեց խաչօ խեղախորոյս :
 — Այո՛, պատասխանեց վաշխառուն անտարբերութեամբ, այո՛, 153½ սակիին երեք տարւան տոկոսը ձեր ստորագրութեանը համեմատ 270 սակիէն աւելի կ'ընէ : չընդունեցիք ամիսը 100—ին 5 տոկոս վճարել :
 — Անիրաւութիւն, է, գալթ ունեցէք, խիղճ ունեցէք, պտուայ խաչօ աչքերը կատարարար փաշլեցնելով և տկոսները կրճատելով :
 — Իրաւունքս կը պահանջեմ :
 — Ի՞նչ իրաւունք :
 — Աւելորդ մի՛ յոգնիր, այդ դումարը քեզմէ կրնամ գանձել, մուրհակնիդ կը մտնա՞ք :

Turned in Turkey

— Գործածուել է այդ, մարտնալը վճարեա՞ծ է, պէտք է որ ինծի գարձնէք:

— Երբ պահանջն վճարե՞ս:

— Հիմա մարտնակա չի՞ պիտի տար:

— Չէ:

— Հալեցնելով ջուրը խմեցէք, ըսաւ խաչո ոտքի ելնելով և մեկնիլ պատրաստելով:

Վաշխատուն խաչօի մեկնիլը տեսնելով ետևէն ըսաւ բարկութեամբ:

— Քեզի նման պնդագլուխներու հարգարը ճրգմեցի, մէյ մըն ալ դուն աւելցիր:

Վաշխատուն մարտնակը գործիք մը չնեկող կ'ուզէր թէ տուն մը կործանել և թէ վառօհն վրէժը լուծել: Եւ իրաւ ալ անվճար մեացած մարտնակին շնորհիւ իրեն նպատակօր վճարողի մը տունալով, Ղազար ազոյի բօլօր կաշածները և գոյքերը գրաւի տակ առաւ:

Ղազար ազան յաւաստում էր:

Խաչօ, այս անխիղճ վաշխատունի դէմ զայրացած, վրէժ լուծելու անգապելի փափաք մը սկսաւ իր խռովայոյց գանկը շարչրկել:

Խաչօ վրէժխնդրութեան նպատակը իր սրտակից բարեկամներէն մէկուն պատմեց. այս բարեկամն ալ Մալխոմեանի մէկ հին զոհն էր, ան ալ կրած էր այդ անիրաւութեան աւերիչ հետեաները:

Բարեկամն ալ մի առ մի պատմեց անոր վանքին այն տխուր անցքը զոր ընթերցողները գիտեն արդէն:

Խաչօ այս սարսափելի եղելութիւնը խմանալով շանթահարեցաւ:

Հինգ վայրկեան վերջը յանկարծ տոքի ելնելով անապարհքով մեկնեցաւ:

Ը.

Հետեւեալ օր կէս գիշերին խաչօ վառօի սենեակը մտաւ, տարօրինակ այլայլութեան մը մէջ: Վառօ իր ամուսինը այդ վիճակին մէջ և աչքերը հրացայտ տեսնելով ճիշ մը արձկեց:

Երխտասարդը դողահար վառօի ձեռքէն բռնեց և արտասուածօր աչքերով համբուրեց:

Վառօ զարմայաւ իր ամուսնոյն այս տարօրինակ վարմութիւն և չկրնալով հանրերեւէ հարցուց.

— Ի՞նչ ունիս, ձեռքերդ կը դողան, աս ի՞նչ վիճակ է:

Խաչօ, փոխանակ պատասխանելու հրամայեց.

— Չաւակա արթնցուր, պէտք է պաղնեմ գինքը:

— Խենդեցա՞ր, ի՞նչ եզար, հարցուց սրտադուրով մը:

— Բէ՛ր կ'ըսեմ, քեզի գոչեց խաչօ բարկութեամբ:

Խեղճ կինը գնաց արթնցուց պղտիկ թաղիկը և հօրը բերաւ, որ գրկեց զայն, համբոյրներով ծածկելով անոր գէմքը: Յետոյ, նստաւ, կինը քովն առաւ և ըսաւ.

— Վառօ, մտիկ ըրէ, գէշ լուր մը պիտի տամ քեզի: Ես պիտի երթամ: Հոս մնալս անկարելի է:

— Ի՞նչ կ'ըսես, գոչեց վառօ:

— Չաւակա քեզի կը ձգեմ, ասով միտիթարէ: Եկուր պագտիւնք:

Իրարու գիրկ ինկան, երկուքին աչքերէն ալ արցունքը առատօրէն հոսնելով:

— Չէ, չը պիտի երթաս, կարօտե՞ղ կը մեռնիմ, կը հեծկտար վառօ:

— Վառօ, չես գիտեր, Մալխոմեանէն մեր ամենուս վրէժը լուծեցի, նոյն իսկ ժամ մը առաջ, թող հիմայ անգիլի աշխարհին մէջ ալ խեղճերը նեղէ:

Մենք բան իմացայ: Ան մեր սունը կերճանեց: Պէտք է երթամ ասկից:

Բաժանումը կսկիծալի եղաւ: Խաչօ գիշերւան մութին մէջ անյայտացաւ և իր ընկերներով Մուշի կողմերը ընկերութեան մարդ գարձաւ, ամեն կողմ աս ու սարսափ աղբեւոյ, մանաւանդ վաշխառուններուն:

Վառօի արձակած ազգայակներէն անեցիներն արթընցան և զինքը շրջապատեցին:

— Մ.խ, Խաչօս, Խաչօս ձեռքէ ելաւ, կը կրկնէր մանկամարդ կիներ յունահատօրէն:

Ըսէ, հարսինչ եղաւ, հրամայեց Ղազար աղա: Վառօ, գիւղական ամօթխածութիւնը մէկը թողալ, սկսաւ համարձակ պատմել ամեն բան:

— Վայ գաւախ, ըսաւ Ղազար աղան. ուրախութեամբ, Աստուծ հետը ըլլայ, ձեռքը գալար: * * *

Խաչօի փախուստէն ութ ամիս ետքը մահաչ ուկ ձայն մը տարածեցաւ Բալուի գիւղերուն վրայ: Մահիկի համաճարակը ամեն տեղ մուտ գանելով, հարաւոր մանուկներու կտտարած մը կ'ընէր:

Պզտիկ թագիկն ալ վարակեցաւ: Մայրը օրերով անբուն հսկեց անոր քովն ի վեր, սակայն ախտը չընտրեց: Ութ օր ետքը գերեզման տարին պզտիկը: Իր միակ միտիթարանքը, իր վերջին ապաւենն ալ կ'եւէր վառօի ձեռքէն:

Սե լաչակ գրաւ ու նստաւ, աչքը մեշտ այն ճամբուն ծայրը, ուսկից տարած էին իր գաւաղը և ուսկից գեռ կը սպասէր իր սիրեկանին, որ ալ չպիտի գար յախտեան:

ՎԵՐՋ

«Հայրենիք»

1894

Printed in Turk

ԳԻՆ 1 ՂՏԾ. ՈՂԶ

25 ՍԱՆԹԻՄ

Printed In Turkey

«Ազգային գրադարան»



NL0372242

59.755